



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՄԻՎԱՐԱՆԵՐԸ ՎՈՏՔԻ
ՏԱԿ

ԹԻՖԼԻՍ
1930



Գիրք պար և պարված

ՅԿԽՈՊ
Մ-68

Ամսութեան է 1981 թ.

ՄԻՎԱՌԵՐԵՐԸ ՎՈՏՔԻ
Տ Ա Կ

ՀՅԴՀՀ



Թ Ի Ց Լ Ի Ս
1930

A 1
1322

Տաղ. Ա. Ֆ. Մայուսիկյանի անվ. հրատ. „Զ զարգացման ելիք ողբ. 36
Պատուի 1789 Գլուխիս 1644 Տիւման 2,000

ՊԻՌԱՆԵՐ, ՄԻԼԻՌԱՆԵՐ ԵՎ ԸՆԿԱՇ ՎՈՅՏԻ ՏԱԿ, —ԿՈՎՅԻՐ ՅԵՎ ԲԱՐՁՐԱՅՐՈՒ

Գիրներ, յեղիք պատրաստ:

Գետական մեծ և կարեռավորյն դործը քո ոգ-
նության կարիքն և զգում, քո ոգնությանը, վորովես
անհատ պիոների, քո ողակի, ջոկատի և ամբողջ Խոր-
հըրդային Միության պիոներների կազմակերպված
ոգնությանը:

Յեղիք պատրաստ:

ԿԸԹՈՒՑԵՆՔ ԱՅԻՍԼԻԶՄ

Գիրներ, դու գիտես, չես կարող չգիտենալ, դու
պետք ե իմանաս այս վոր մեր հոկա Խորհրդային
Միությունը, հանդիսանալով առաջին աշխատավորա-
կան պետությունը, ձեռնամուխ յեղավ սոցիալիզմի
կառուցմանը:

Գիրներ, դու գիտես նաև այն, վոր սոցիալիզմի
կառուցման գործը մեր Միությունը տանում ե այն
ժամանակ, յերբ նա շրջապատված է թշնամի կապե-
տալիստական պետություններով, և նրանցից վոչ մեկը
չի ոգնի մեզ: Մեր յերկրի բազմամիջիոն աշխատավոր
մասսաների ույժով, մեր սեփական ույժներով ու մի-
ջոցներով ԽՍՀՄ կառուցում ե սոցիալիզմի մեծ դործը,

իսկ վնրապեսզի կարողանանք սոցիալիզմ կառուցել,
հարկավոր են հսկայական միջոցներ:

Պիոներ, դու գիտես նաև, վոր մենք հարկադըր-
ված ենք վերակառուցել մեր յերկրի արդյունաբերու-
թյունն ու գյուղատնտեսությունը, պետք ե նորանոր
ֆաբրիկաներ ու գործարաններ կառուցել, հանգանո-
րեր ու ճանապարհներ բացել, շոգեկառքեր, շոգենա-
վեր և ելեկտրոկայաններ կառուցել, հերկել մինչև
այժմ անմշակ մնացած հողերը, մաքրել անտառները,
չորացնել ճահիճները, կոլեկտիվացման սկզբունքների
հիման վրա հիմնովին վերակառուցել գյուղատնտեսու-
թյունը: Այնտեղ, ուր գոյություն ունեին 25 միլիոն
մանր, անջատ, թույլ գյուղացիական տնտեսություն-
ներ, վորոնք յետամնաց յերկրագործական գործիքնե-
րով հազիվ եյին կարողանում պահպանել իրենց գո-
յությունը, այսոր Խորհրդային Միությունը կազմա-
կերպում ե հզոր կողեկտիվ տնտեսություններ, ուր
ընդգրկվում են այդ մանր տնտեսությունները, ուր
տիրապետում ե կոլեկտիվիստական սկզբունքը, վոր-
տեղ հողը մշակվում ե կատարելագործված՝ բարդ մե-
քենաներով և ստացած բերքն անցնում ե պետու-
թյանը, վորը բաշխում ե աշխատավոր մասսաներին:

Պիոներ, դու գիտես, վոր Խորհրդային Միու-
թյունը նպատակ ե դրել մեր յերկրում վերացնել ան-
գրագիտությունը, իսկ դրա համար պետք ե կառուց-
վեն այնքան դպրոցներ, վորտեղ կարող կլինին սովո-
րել դպրոցական հասակի բոլոր յերեխաները և վոչ մի
տղա կամ աղջիկ չի մնա անուսում:

Դպրոցների, գործարանների, Փաբրիկաների,
ելեկտրոկայանների, յերկաթուղակծերի, գյուղացիա-

կան տնտեսությունների կողմեկտիվացման, խորհ. անտեսությունների կազմակերպման, անմշակ հողերի հերկման համար հարկավոր են տրակտորներ և այլ գյուղատնտեսական մեքենաներ, այս բոլորի համար հարկավոր են հսկայական միջոցներ:

Դու զիտես, վոր Խորհրդային Միությունը կազմել ե և կիռարում ե կյանքում մեր յերկրի կառուցման հնդամյա պլանը Համաձայն այդ պլանի, հինգ տարվա ընթացքում — սկսած 1928-29 տնտ. տարուց մինչև 1932-33 տնտ. տարին պետք ե լնդամենը ծախսված լինի՝

Արդյունաբերության վերակառուցման համար՝

25 միլիարդ ռուբլի.

Դյուղատնտեսության վերակառուցման համար՝

23 միլիարդ ռուբլի.

Հաղորդակցության միջոցների և նոր յերկաթուղակճեր կառուցելու համար՝ 13 միլիարդ ռուբլի.

Մնացած բոլոր ծախսերի համար՝ 10 միլիարդ ռ.

Լնդամենը հինգ տարվա ընթացքում պետք ե ծախսվի 92 միլիարդ ռուբլի:

Հարկավոր ե մի վորե և տեղից գտնել կամ ըստանալ այդ գումարը: Այդ գումարը ԽՍՀՄ աշխատավորությունը կապիտալիստական յերկրներից չի կարող վերցնել վորովինետե վերջիններս ատում են սոցիալիստական պետությունը և սոցիալիզմը, այդ պատճառով նրանք յերբեք չեն նպաստի մեզ: Հարկադրված ենք այդ միջոցները—բոլոր միլիարդ ռուբլիները, վորոնք հարկավոր են հնդամյակի համար, գտնել մեր յերկրի ներսում:

Ցեվ մեր Խորհրդային Միությունն այդ միջոցները փնտռում ե ամենուրեք:

Սոցիալիզմի կառուցման գործի համար, թե արդյունաբերությունը և թե գյուղատնտեսությունն ու ամբողջ աշխատավորությունը մտցնում ե իր լուսան:

Հսկայական միջոցներ են հարկավոր. մեր իշխանության բյուջեն, ինչպես ասում են, լարված ե, հաշվի յեւ առնված ամեն մի ոռւբլին, ամեն մի կոտեկը, այնինչ մեր յերկրում վոտքի տակ անոգուտ կորչում են բազմաթիվ արժեքներ: Յեթե այդ արժեքները հավաքենք և ինչպես հարկն ե ոգտագործենք, կարելի յեւ ստանալ հսկայական միջոցներ, տասնյակ և հարյուրավոր միլիոն ոռւբլիներ, վորոնք կարող են նպաստել մեր սոցիալիստական շինարարությանը:

Պիոներ, այդ միլիոն ոռւբլիները թափված են վոտքի տակ, կաացիր և բարձրացրու նրանց:

Դու պիօներ, քո ամբողջ կազմակերպության հետ միասին կարող ես պետությանը, մեր մեծ Միությանը հսկայական, անդնահատելի ողնություն ցույց տալ Այս գործում ողնության ենք կանչում քեզ: Յեղիր պատրաստ:

ՊԻՈՆԵՐ, ՄՅՅՐՈՒ ՔՈ ԲԱՓԻՆԸ ՄՈՅԻՇԱԽՄԻՉՄԻ ԿԱԲՈՒՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Վճռտեղ են դանվում այդ արժեքները, վորոնք անոգուտ կորչում են:

Ինչումն են կայանում այդ միջոցները. մատնանշենք՝ աղբանոցներում. այն, այս, պիօներ, մի ժըպտա և մի զարմանա:

Ամեն որ աղբի վեղբոն են նեավում մեծ արժեքներ, վորոնք յեթե հավաքենք և ինչպես հարկն ե ոգ-

տագործենք, կամ ինչպես ասում են, շահագործենք,
սոցիալիզմի գործին մեծ ռդուտ մատուցած կլինենք:

Ամեն որ, մենք խոհանոցներից ու սենյակներից
աղբի վեղբոն ենք նետում և թափում աղբանոցները
մեծ արժեք պարունակող աղբեր՝ փալասներ, վոս-
կորներ, անպետք և հին թղթեր, կոտրված մետա-
ղյա ամաններ, սրվակներ, պարանի կտորներ և այլն,

Մի ժպտու, պիոներ, բոլոր այս տնական ան-
պետք իրերը և փալասները և վոսկորները, պահա-
ծոների տուփերը և հին ու պատճենաված կրկանկոշիկ-
ները ծխախոտի տափերը, թղթերը և այլն—այս
բոլորն ունեն արժեք և կարող են նորից ոգտա-
դորձվել:

Բոլոր հին ու անպետք կտօրներն ու փալասնե-
րը, վորոնք մաշված ու գործածությունից դուրս են
նետված, պետք և հավաքել կապել և ուղարկել պա-
հասու: Պահեստում այդ բոլոր փալասները բաժանում
են ըստ տեսակների, մեծության և վորակի. մեծ փա-
լասի կտօրները հավաքում են առանձին, փոքր կտօր-
ներն առանձին, բրդյա փալասներն առանձին, բամ-
բակյանն առանձին: Ապա այդ փալասների կույտերը
յենթարկվում են աղտահանման, մամլում են, կա-
պում են մեծ-մեծ հակեր և ուղարկում գործարան,
բրդյա փալասներն ուղարկում են բրդամանածագոր-
ծարան, բանբակյա փալասները՝ բամբակի գործարան
կամ թղթի գործարան, կտավե փալասները նույնպես
թղթի գործարան:

Բրդամանածագործարանում բրդյա փալասները
նորից բաժանում են տեսակների, այն ե՛ փափուկ
բրդյա, կոշտ բրդյա և կիսաբրդյա, հետո նրանց

մաքրում են փոշուց առանձին մեքենաներով, իսկ կիսարրդյան ուրիշ թելերից և զերծաններից կտավե կամ բամբակյա և հետո տռանձին մեքենաներով գզում են: Այս գզած մազմղուկները խնամքով սանրում են և ստացված բուրդը, բոլորովին նոր բըրդի հետ միասին գնում ե գործվածքի համար: Դղելուց հետո, մնացած չոփը գործվածքի համար անպետք ե, վորի մի մասը գործ և ածվում թաղիքյա արդյունաբերության մեջ, իսկ մյուս մասն այրում են և ստանում թանկարժեք առանձին բաղադրություն, վորը կոչվում ե սինկալի:

Բամբակյա փալասները, վորոնք տարվում են գործարան, նույնպես մաքրվում են փոշուց ու ներկերից, գզում և ստանում են մազմղուկներ: Այդ մազմղուկներից պատրաստում են կամ բամբակ - բամպակի գործարանում, կամ հատուկ հաստ - կուրդոն, վոր կպրով հողեցնելուց հետո, շաղախում են ավազով և այդպիսով, ստացված կարտոնն ողագործում են յերկաթե թիթեղների փոխարեն, տանիքներ ծածկելու համար:

Թղթի գործարանում կտավե և բամբակյա փալասները, յենթարկվելով նույն սկզբնական զտմանն ու մշակմանը, ինչպես բրդինը - բրդամանածագործարանում, ստացած մազմղուկները գործ են ածվում ամենալավ թուղթ պատրաստելու համար, վորը գործ ե ածվում դրամանիշների, դրոշմանիշների և այլ պետքերի համար:

Հին կրկնակոշիկը և այլ պատռաված, հնացած ուղինե իրերը ուղարկում են կրկնակոշիկների գործմրան, վորտեղ նրանց լվանում են, մաքրում, զառում են կողմակի պատառներից այլ նրանց կպցրած

կտորներից ու ապա լցնում են հալած, նոր ուղինի
մեջ:

Ամեն մի զույգ նոր կրկնակոշիկի մեջ, վոր գը-
նում ենք խանութներից, 1-յերրորդական մասից վոչ
պակասը կազմում և հին կրկնակոշիկներից ստացված
ռեզինը, սա նշանակում է, վոր մենք 1-յերրորդական
մասով պակաս ծախսեցինք այն գումարից, վոր գնում
եր արտասահման կառչուկ գնելու համար:

Աղբանոցները նետված մետաղյա իրերը—ծոված,
այրված թեյամանները, ամանեղենները, ջրաման-
ները, պահածոյի տուփերը և այլն, գնվում են վոր-
պես հումույթ, վորի մի մասը հալում են և պատրաս-
տում նոր իրեր, իսկ մյուս մասը գործ և ածվում վոր-
պես կարկատաններ, զանազան մետաղե իրեր կարկա-
տելու համար: Բացի դրանից, ստացվում են մեծ քա-
նակությամբ թանկարժեք զունավոր մետաղներ—
անառ, արճիճ, շինկ, պղինձ, ալյումին—վերջինիս
մեծ կարիքն և զգում մեր Միությունը իր զարգացող
արդյունաբերությամբ, և վորի համար մենք ստիզ-
ված ենք մեծ զումարներ տալ արտասահմանյան
բուրժուազիային. այսպիսով, անպետք, դեն զցած
մետաղյա իրերի հավաքումը թույլ և աալիս մեր
պետությանը անտեսելու հսկայական գումարներ և
այդ գումարները ծախսել ուրիշ նպատակների համար
նոր մեքենաներ և դագգյահներ ձեռք բերելու համար,
վորոնցով կարող կլինենք սարքավերել մեր գործա-
րանները, ֆաբրիկաները և զարգացող գյուղատնտե-
սությունը:

Նետված, պատռաված և ճմոթված թղթերը՝
թերթերը տետրերը, ծխախոտի տուփերը և այլն—

Նույնպես զատվում են և գնում գործի. թղթի գործարաններում նրանց մաքրում են ներկերից և պատրաստում նոր թուղթ:

Ամեն մի փոքր թղթի կտոր, վորքան նա լինի կեղաստ, պատութված, ողտագործվում է. անպետք կարելի յև համարել միայն յուղութած թղթերը, յեթե նման թղթեր խառնենք վոչ յուղոտի հետ, կփչանա մշակվող հումույթը:

Նույնպես հավաքվում են նաև մորթու կտորտանքը, մուշտակների և գլխարկների ծվենները և այլն. սրանցից զատում են բուրդը, վորի մի մասը գնում և մահուդի և բրդյա գործվածքների համար, ինչպես փալասներից ստացված բուրդը, իսկ մյուս մասը թաղիքային գործվածքների—թաղիքից գործած վոտնամանների և բուրդ թաղիքային գործվածքների համար։ Որինակ, ճաղարի և նապաստակի մազը գնում և կանացի բարակ գլխարկներ և վոտնամաններ պատրաստելու համար, իսկ կաշին գործ և ածվում զանազան յերաժշտական գործիքների համար։

Խոհանոցից դուրս յեկած վոսկորները գործադրվում են տարբեր նպատակների համար. պատրաստվում են զանազան կոճակներ, անընդեր, պատառաքաղների և զանակների կոթեր, մատանիներ, զարդարանքներ և այլ վոսկորյա իրեր։ Այդ վոսկորների գլխավոր մասը յեփում են և ստանում սոսինձ, բարձր վորակի մեքենաների յուղ։ Մնացածը մանրացնում և դարձնում են վոսկորյա ալյուր, վոր ծառայում և վորպես թանկարժեք պարարտացնող նյութ այգիների, բանջարանոցների, ծաղկանոցների և դաշտերի համար։

Պարանի կտորները և հին թելերը, նորից հանողիսանում են պետքական հումութեան սրանց ևս մի շարք փոփոխությունների յենթարկելուց հետո, ոգտավործում են առանձին պետքերի համար:

Նույնիսկ խսիրի դուրս նհտած փոքր կտորները, վորոնք առորյա կյանքում վոչնչի պետք չեն, արդյունաբերության համար մեծ նշանակություն ունեն. նըրանց յենթարկում են աղտահանման, լվանում են ու հետո զգում, ստանում են մազմզուկներ, վորը ծառայում է ներքնակներ և բազկաթոռներ պատրաստելու համար:

Ահա թե վորքան մեծամեծ գործադրություն ունեն տնային ավելցուկները, կամ խլամը, յեթե նրանց ողագործենք նպատակահարմար կերպով և վոչ թե նհտակնք աղբանոցները, ինչպես անում եյին մինչև այժմ:

ԿՈՐՉՈՒՄ Ե ՈՒՏԻԼԸ, ԳԾՆԴԱԾՈՒՄ Ե ՍՈՑԻԱԼԻԶՄԻ

ԿԾՌՈՒՑՄԱՆ ԴՐՅԵԼ

Ի՞արկե, առանձին թղթի կտորը, վոսկորը, պահածոյի տուփը, փալասը, վոչինչ չարժեն Սակայն, հավաքեցնք նրանց միասին, պահականեցնք փտելուց ու նեխումից—և արգեն նրանք կներկայացնեն վորոշարժեք, վորի համար փող և վճարվում:

Այսպես որինակ, այն կազմակերպությունը, վորհավաքում և ու պատրաստում տնային այդ անպետք իրերը, վորոնց մասին մենք վերնում խոսեցինք, 1 կիոգրամմ փալասին վճարում են 2 և կես կոպեկից մինչև 50 կոպեկ: Յեթե փալասը բոլորովին անպետք են 2 և կես կոպեկ: Հնոտիքը, վորքից ավելի պետքա-

կան և 20 կոպ., իսկ մաքուր բրդյա փափուկ փալասը 20 կոպեկից մինչև 50 կոպեկ: Մեկ տոնն փալասը միջին հաշվով գնահատվում է 120 ռուբլի, մինչդեռ մաքուր բրդինը՝ մինչև 178 ռուբլի: 1 տոնն վոսկորն արժե 40 ռուբլի, մեկ տոնն հին ռեզինը՝ 85 ռուբլի, մեկ տոնն կոտրտված մետաղների կոտրները գնահատվում է 20 ռուբլի, հին մակուլատուրային թղթի տոնն գնահատվում է 20-30 ռուբլի, կամ կիլոգրամը՝ 2-3 կոպեկ: Պետքական հին արվակների հատը գնահատվում է 1 և կես կոպեկ:

Պիոներ, դու այժմ տեսնում ես, վոր տնային այդ խամը. աղքն իրենից ներկայացնում է մեծ արժեք: Յեթե նրանց հավաքեն ու պահպանեն, ահագին փող կշահեն:

Մեկ սենյակից, մեկ ընտանիքից կարելի յե հավաքել վոչ ավել քան տարեկան 200 կիլոգրամմ: Ամբողջ տնից կամ թաղից կարելի յե հավաքել իսկ ամբողջ գյուղից կամ քաղաքից ավելի շատ: Յեթե տնային այդ աղքի հավաքման համար գործադրեն ավելի յեռանդուն ու կազմակերպված աշխատանք, մեր ամբողջ յերկրից կարելի յե հավաքել հսկայական հարստություն, վորն արդեն կարելի յե արժեքավորել 100 միլիոն ռուբլիներով:

Դու գիտես հաշվել: Գցիր: Մեր Միության ազգաբնակության թիվը հասնում է 150 միլիոնի: Մեզնից ամեն մեկից յուրտքանչյուր տարի մնում եւ մոտավորապես 40 կիլոգրամմ տնային արժեքավոր աղք: Նշանակում ե, մեկ տարում մեր յերկրից կարելի յե հավաքել մինչև 6 միլիարդ կիլոգրամմ կամ 6 միլիոնն տոնն տնային զանազան տեսակի, վորակի աղբեղեն, ինչ-

պիսիք են՝ փալասներ, մետաղներ, վոսկոր, թուղթ, ոեղին և այլն:

Վերցնենք առանձին փալասներ: Հաստատված ե արդեն, վոր տարեկան ամեն մի մարդ դեն ե զցում իր վրայից, վորպես անպետք հնութի, Զ կիլոգրամմ զանազան փալաս-շապիկ, վարտիկ, վերնաշապիկ, բաճկոն, կանանց շրջազգեստ, գուլպա, գլխարկ և այլն: Մեկը կարող է այս տարի շատ դեն ձգել, մյուսը քիչ, բայց միջին հաշվով ամեն մի մարդուն ընկնում ե 2 կիլոգրամմ: Նշանակում ե, մեր յերկրում 150 միլիոն ազգաբնակությունն ամեն տարի դեն ե ձգում 300 միլիոն կիլոգրամմ կամ 300 տոնն փալաս: Մեկ տոնն փալասը, ինչպես արդեն մենք ասել ենք, միջին հաշվով գնահատվում ե 120 ռուբլի: Նշանակում ե, յուրաքանչյուր տարի մեր վրայից վայր են ձգում 30-36 միլիոն ռուբլի:

Արժեք ե այս: Ինարկե, արժեք ե, այն ել վոչ փոքր, այլ ամբողջ հարստություն:

Իսկ ինչպես ենք մենք ոգտագործում այդ հարցստությունը: Մենք չենք կարողանում ոգտագործել նրան: Ամբողջ յերկրից մենք կարողանում ենք հավաքել միայն 10 միլիոն ռուբլու փալաս, մեկ յերբորդից ել պակաս, իսկ յերկու յերբորդականից ավելին փուռմ ե աղբանոցներում, կամ այրվում վառարաններում և այսպիսով, իգուր տեղը կորչնում:

Ավելի շատ մեզ մոտ կորչում են այլ թանկագին աղբեր—մետաղներ, թղթեր, սրվակներ, վոսկոր, ոեղին և այլն: Որինակ վերցնենք Մոսկվան:

Ամեն տարի Մոսկվայում դեն ե ձգվում 6 հազար տոնն զանազան տեսակի փալասներ, իսկ ընդա-

մենը հավաքում են հազար տոնն։ 5 հազար տոնն
փալասն անողուտ կորչում եւ 4 և կես հազար տոնն
կը կնակոշիկ և մշակվում, իսկ պահեստ և գալիս 500
տոնն։ 4000 տոնն նորից անհետ կորչում եւ Պահա-
ծոյի տուփերը, վոր զեն են ճգիվում պահածոն սպառե-
լուց հետո, յեթե միասին հավաքենք ամբողջ Մոսկ-
վայի գործածածը, կստանանք 2000 տոնն մետաղի
իսկ այդ բոլորը կորչում եւ հումույթի պահեստը վո-
չինչ չի ստանում։ Մոսկվայի խոհանոցներից տարե-
կան ստացվում և 24 հազար տոնն վոսկոր, վորից
պահեստին և անցնում միայն 5000 տոնն, իսկ մնա-
ցածը փոտում և ազրանցներում։

Մոսկվայի խոհութները տարեկան 17 միլիոն
հատ սրվակ են ծախում դանազան խմիչքներով։ Հու-
մույթի պահեստը հավաքում է 300 հատ։ Ամեն տարի
կորչում է 10 ու կես միլիոն սրվակ։

Արժեք և այս բոլորը Պարզ եւ։

Մոսկվան, ինչպես նաև ամբողջ Միությունն
ազրանոցն են նետում և վոչնչացնում ահադին հարըս-
տություն։ Հարկավոր և փրկել այդ հարստությունը
վոչնչացումից, այս բանին, իհարկե, վոչ-վոք չի հա-
կառակի։ Այդ անհրաժեշտ եւ Բայց այդ հարկավոր և
անել տուանց դանդողելու, մի բոսկ չկանգնեցնել հու-
մույթի հավաքման գործը։

ԹԱԼՈՐ ՊԵՏՔՆԱՆ ԱՎԱՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Մի վորեն հիվանդություն բժշկելու համար
հարկավոր ե իմանալ այդ հիվանդության պատճառ-
ները։ Վորպեսզի կարողանանք վոչնչացումից փրկել

հարսուությունը, հարկավոր և իմանալ նրանց կորցա-
տյան պատճառները:

Տնական կարեոր աղքի վոչնչացումն առաջ ե գո-
լիս հասարակ պատճառներից՝ 1) գլխավորապես նրա-
նից, վոր մենք չգիտենք այդ աղքի թանկարժեքու-
թյունը և 2) մեր անփույթ վերաբերմունքից դեպի
այդ աղքը:

Ինչպիսի վերաբերմունք են ունեցել դեպի այդ
անական աղքը:

— Այդ անզետք և անարժեք բան ե, ասում
ենք մենք:

Պիստեր, ձեզանից ամեն մեկը լսած կլինի մեծե-
րից—հորից, մորից, մեծ յեղբորից կամ քոչից խըն-
դիր կամ հրաման՝

— Գնա և դեն ածա այն աղքը, կամ՝

— Կոխիր նրան վառարանը...

Հավանական ե, դուք տեսել եք նաև, թե ինչ-
պես մայրը բարկացել ե հոր վրա հին լրազրներ հա-
վաքելու համար՝

— Ինչիւ համար ես հավաքել այդ թղթի կառ-
տանքը. այրիր վառարանում, վորպեսզի փոշի չտա-
րածվի սենյակում...

Հավանական ե, դուք տեսել եք, թե ինչպես
մայրը կամ քույրը աղբանոցն ե նետել փալասներ,
պահածոյի տուփեր թղթեր և հետո դրանց վրա լըժ-
րել են յուղոտ ամանների ջուրը կամ կեղտոտ սապնա-
ջուրը, մրգերի կնեպներ և այլն ասելով՝

— Ռու կորցնենք այս ավելցուկները:

Յեվ իսկապես մենք չգիտենք, թե ուր գցենք
այդ աղքերը, բացի աղբանոցից:

Մինչև այժմ մեզանում լավ հիմքերի վրա չեր
դրված տնային ավելցուկների հավաքման գործը.
Նույնիսկ քաղաքներում այդ տնային ավելցուկները
նեխվում ու փոռում եյին աղբանոցներում։ Ավելին
կտանք, մեր Խորհրդային Միության մեջ գոյու-
թյուն ունեն մեծ հանրապետություններ բազմամի-
լիոն բնակչությամբ՝ ինչպիսիք են՝ Կազակստան,
Ռուսականան, Թուրքմենստան, Կիրգիզանան, Աղրբե-
ջան, Վրաստան, Հայաստան, վորտեղ աղբի հավաք-
ման գործը համարվում ե տգեղ և անպատճիվ գործ,
վորտեղ այն մարդը, վոր զբաղվում ե այդ գործով,
համարվում ե ցածր մարդ։ Հասկանալի յե, վոր այդ
հանրապետություններում հումույթը հավաքել ու
պահպանել վոչ վոք չի համաձայնվի։ Այստեղ, ինչ-
պես և մեզանում, այդ աղբն աղբանոցներն եյին թա-
փում և թափում են, վորտեղ նրանք նեխվում, փոռում
ու վոչչանում են։

Պիտի վերջ դնել նման անփույթ վերաբերմուն-
քին։

Տեսեք, թե արտասահմանում ինչպես են հավա-
քում այդ աղբը։ Դերմանիայում, Թրանսիայում,
Չեխո-Ծլովակիայում, Անգլիայում, Ամերիկայում և
այլ արտասահմանյան յերկրներում տանտիկինները և
տնային աշխատավորուհիները չեն թափում այդ աղ-
բը, վոր իրենից մեծ արժեք և ներկայացնում
— փալասներ, մետաղներ, վոսկորներ, ուղին, թուղթ
և այլն։ Վճչ Ամեն մի քն ակարանում և խոհա-
նոցում կան հատուկ արկղներ կամ կողովներ, ուր
տնային աշխատավորուհիները և տանտիկինները հա-
վաքում են այդ անպետք աղբը։ Հատուկ արկղներ

կան նաև մոխրի համար, քանի վոր մոխրն իրենից
ներկայացնում ե արժեքավոր պարագանյութ դաշ-
տերի համար:

Այդ ասպարեզում Գերմանիան ավելի առաջ ան-
ցավ, այնտեղ ոգտագործում են վոչ միայն տնային
աղբը, այլև ամանները լվանալուց հետո մնացած
ջուրը կամ յուղաջուրը:

Անգլիայում լրագրների, զբքերի, նամակների
և այլն պետքերի համար բաց և թողնվում մեկ միլ-
իոն 700 հազար տոնն թուղթ: Այդ ընդհանուր քա-
նակից ուտիլի պահեստն են հավաքում ու յետ հն
ուղարկում ֆաբրիկաները, նորից մշակելու համար
500 հազար տոնն գործածած թուղթ: Դա կազմում է
ամեն տարի ֆաբրիկաներից սահցվող նոր թղթի 36
տոկոսը: Իսկ մեզ մոտ նոր թուղթ և արտադրվում
տարեկան 550 հազար տոնն, վորից հետ և հտվաք-
վում և ուղարկվում ֆաբրիկա 65 հազար տոնն հին
գործածած թուղթ, կամ 12 տոկոսը: Ուրեմն մենք յե-
րեք անդամով պակաս ենք ոգտագործում հին թղթ-
թերը, քան անգլիացիք:

Գերմանիայում հավաքվում և 100 տոկոսով ամե-
նայն տեսակի սատկած կենդանիների ու գազանների
վուկորներ, իսկ մեզ մոտ համարյա թե նրանք չեն
հավաքվում:

Մենք այնքան ել հարուստ չենք, վորակեսզի
սառնարյուն դիտենք, թե ինչպես են փառում և վոչն-
չանում աղբանոցներում մեծ արժեքներ, մենք
չպետք ե լինենք շուայլ վոր բղթում և անուշադրու-
թյունից և տգիտությունից: Յեզ անուշադրությունը
և տգիտությունը պետք ե վերացնենք:

Այս գործում, դու պիոներ, կարող ես մեծ մաս-
նակցություն ցույց տալ քո ողակով, ջոկատով և ամ-
բողջ պիոներական կաղմակերպությունով Խորհրդա-
յին Միությանը:

ՊԻՈՆԵՐ, ԿԸՆՉԱԿԵՐՊԱՅԻ ԿԵՐՊՈՎ ՌԻՑԻԼ
ՀՈՆՉԻԹՅԱՆԻ ՊԵՏՈՒԹՅԱՆԻ.

Պիոներ, ինչով կարող ես դու ոգտակար լինել
պետությանն ուտիլի հավաքման գործում:

Ամենից առաջ դու կարող ես հետեւ, վորպեսզի
չվոչնչացնեն տնային աղբը Այն տանը կամ այն
բնակարանում, ուր դու տպրում ես, կարող ես զառ բան
անել տնային աղբի փչացման կամ նեխման առաջն
առնելու համար: Դրա համար չպետք է դրանց նետել
աղբանոցը, չխառնել ճաշի թաց մնացորդների հետ և
ամենագլխավորը, չպետք է դրանց թրջել զանազան
աղտածներով: Հարկավոր է գրանց հավաքել առանձին
արկղներում, կողովներում կամ պարկերում: Մինակ
այս գեպքում տնային աղբերը չեն կորչի և կպահ-
պանեն իրենց արժեքը: Խսկ յեթե նրանց թողնենք
թրջելու զանազան աղտածներով, նրանք կփթեն և
կվոչնչանան: Փթած կամ նեխված աղբը վոչ մի ար-
ժեք չունի, դրա տեղն աղբահորեն են:

Վորպեսզի կարգավորես տնային աղբի փչացու-
մից աղատելու ու հավաքելու գործը, դու պետք է
ձեր բնակարանի տանտիկիններին և տնային աշխա-
տավորներին պատմես ու հասկացնես, վոր այդ աղբերն
ունեն մեծ արժեք, վոր նրանց կարելի յե կրկին ոգտա-
գործել և համողել նրանց հավաքել այդ անպետք

անային աղբն առանձին արկղների մեջ։ Դու, նույն-
պես պետք ե հետեւս, վոր այդ իրագործվի շարունակ
ընդմիշտ, դա առաջին և ամենազլիսավոր կողմն եւ:
Դեպի այս գործն անուշադիր լինելու դեպքում,
վորի վրա մեծ ուշադրություն են դարձնաւմ ուստի լ
Պետառը և այլ կազմակերպություններ, կիսով չափ
կկորցնի իր նշանակությունը։ Մեր կատարած աշ-
խատանքը բոլորովին զուր կանցներ, և յեթե տան-
տիկինները և տնային աշխատավորուհիները չիմանան
այն մասին, վոր այդ անպետք իրերն իրենցից ներ-
կայացնում են մեծ արժեք, կամ թե չե, տուաջվա նը-
ման անփութ վերաբերվեն դեպի այդ աղբը, նետե-
լով նրանց աղբանոցները, վորտեղ նրանք կիթեն
և կկորչեն իզուր տեղը։

Իսկ հետո զու կարող ես անձամբ մասնակցել
տնային անպետք իրերի հավաքման գործին։

Դու կարող ես քեզ վրա վերցնել պատասխանա-
տվություն, ամեն որ զուրս տանել չոր և անպետք
աղբն այնտեղ, վորտեղ զու մտագրված ես հա-
վաքել։

Չոր ավելցուկների հավաքման գործը զու կարող
ես կազմակերպել հետևյալ ձևով։ Բնակարանա-
յին վարչությունը պետք ե ստեղծի առանձին
հարմարություն, առանձին տեղ — տան բակում,
ներքնահարկում, փայտանոցում, վորտեղ պետք ե
հավաքվի ամբողջ տան անպետք աղբը։ Յեթե բնա-
կարանային վարչությունն առանձին տեղ չի հատ-
կացրել այդ գործի համար, պահանջիր նրանից, վոր-

պեսզի շուտափույթ կերպով ստեղծի հարմարությունն Յեթն բնակարանային վարչությունն ընդառաջ չի գնում քո ցանկությանը, այդ խնդիրը դեր քո ողակում, կոլեկտիվում կամ կոմսոմոլի քջիջում, նրանք կգտնեն միջոցներ ստիպել բնակարանային վարչությանը կատարել քո պահանջը:

Հավաքման տեղում նրանց պետք ե դասավորել ըստ տեսակների. Փալասներն առանձին կույտ, կոտըրտված մետաղյա իրերն առանձին, վոսկորները և սրվակները նույնպես առանձին-առանձին կույտերու Ամիսը մեկ կամ յերկու անգամ, նայած քանակին, կառավարությունը սայյերով կամ բեռնակիր ոթումորիլով կգա և կտանի պահեստ ձեր հավաքած աղբը:

- Մինչեւ ընդունողի գալը, ուտիլը պետք ե հավաքել խոհանոցից և բնակարանից այն հատուկ տեղը, վոր հատկացրված ե բնակարանային վարչության կողմից: Տնական աղբը պետք ե հավաքել այդտեղ ամեն որ, բնակարաններում և խոհանոցներում անհնար ե պահել, և տեղ ել չկա պահելու:

Պետք ե գործը կազմակերպել այնպես, վոր ամենն որ մեկը բնակարանից և խոհանոցից դուրս տաներ այն արկղները և կողովները, վորոնք պարունակում են արժեքավոր ավելցուկներ. կազմակերպել գործն այդպես, դա քո պարտականությունն ե, պիոներ: Ինչպես այդ անել, դա մենք չենք մատնանշի, այդ խնդրով կզբաղվի բնակարանային վարչությունը: Նա կարող ե հանձնարարել առանձին մարդու, տնային բան վորին, տանտիրուհուն, տան աշխատավորուհուն և այլն:

Այդ գժվար աշխատանք չե: Ամեն որ, ամեն մի խոհանոցում հավաքվում ե 2-ից մինչև 3 կիլոդրամմ

չոր արժեքավոր աղք, ամեն որ դուրս տանել այդ կողովը կամ արկղը, վոչ վոքի համար մեծ աշխատանք չեւ:

Նկատիր! Մանք խոսում ենք միմիայն չոր աղբերի մասին, թացերը՝ կերակրի մնացորդները, յուղոտ աղտաջրերը, մենք դեռ ևս չենք հավաքում:

Կրկնում ենք, անել այդ, այսինքն, չոր աղբերը հավաքել ամեն որ, սիստեմատիկորեն, կազմակերպված կերպով:

Ամբողջ տան, իսկ յեթե տունը մեծ չեւ, ամբողջ թաղի կամ շրջանի հումույթի հավաքման գործը կարող ե իր վրա վերցնել պիոներական կազմակերպությունը—ողակը կամ ջոկատը: Մրա համար պիոներական կազմակերպությունը նախորոք պետք ե համաձայնության գան բնակարանային վարչության հետև ապա գործը բաժանել առանձին ջոկատների կամ ողակների մեջ. համաձայնությունն կնքելու ժամանակ պետք ե պարզել թե այդ աղբերը հավաքելու համար բնակարանային վարչությունն ինչքան պետք ե վճարի կոլեկտիվին: Զե՞ վոր բնակարանային վարչությունը պետությունից աղբի համար փող ե ստանում: Աղբը գուրս տանելու համար բնակարանային վարչությունը պետք ե վարձի առանձին մարդ, վորին պետք ե վճարի մի վորոշ գումար: Այդ մարդու պարտականությունների մեջ են մտնում նաև այն, վոր պեսզի չգողանան հավաքած հումույթը, չփշանա, և ամիսը կամ 2 ամիսը մեկ անգամ հումույթը հանձնվի համապատասխան հիմնարկներին:

Բոլոր այս պարտականությունները դժվար և բարդ չեն, պիոներական կազմակերպությունը կարող

ե իր վրա վերցնել այս պարտականությունները և
բաժանելով ողակի, ջոկատի և առանձին պիոնների
մեջ, և այսպիսով հեշտ ու կազմակերպված կկարողա-
նանք տանել աշխատանքը:

ԿՈԱԼԱԿԻ ՎԶԱԿԹԻՆ, ՄԵՆՔ ԻՆՉՆԵՐԸ ՀԱՎԱՔԵՆՔ ՌԻՑԻԼԲ

Դյուզում ուտիլի հավաքման գործին ավելի մեծ
ուշադրություն են գարձնում, քան քաղաքում և գյու-
ղի պիոններն այդ տապարեզում հսկայական աշխա-
տանքներ և տանում։ Տնային աղբերի հավաքելը
նրանց համար նոր գործ չեւ Սակայն ոյուզում հավա-
քում են զլսավորապես կտորեղեն, փալասներ։

Դյուզական իսոքրիկ տղան կամ աղջիկը հավա-
քում և իրենց տան զանազան տեսակի փալասներ,
պահում նրանց և, յերբ գալիս և փալաս հավաքողը
(սրանք առանձին չարչիներ են, վորոնք եժան գնե-
րով հավաքում են փալասներն ու ապա ծախում) տա-
լիս և նրան, փոխարենը ստանալով անարժեք ու ան-
պետք խաղալիքներ։

Առանձնապես այս բանը տարածված և Ռուլա-
յինայում։

Այնտեղ, յերբ փոքրիկ տղան կամ աղջիկը տանը
գործ և կատարում, որինակ ամբարում և փայտը,
կամ ջուր և կրում, փոխարենը ծնողներից ստանում և
տան ամբողջ փալասները։ Յեվ այսպիսով, յերբ գա-
լիս և փալաս հավաքողը, դյուզի ամեն կողմից բերում
են այդ փալասները և փոխարենը ստանում՝ տղա-
ները սուլիչ, գրպանի փոքր դանակ, եժանաղին քը-

սակ: Աղջիկները՝ ճաղեր, սանր, սալոն, ապակե մանյակ, ժապավեն, շատ անգամ նաև յերկու կանչետ կամ մի կտոր խմորմղեն:

Փալաս հավաքողները յերեխաներին առանձնապես շատ եյին խափում մինչ հեղափոխությունը Թանկարժեք, շատ անգամ մեկ ոռւբլիանոց և դեռ ավել արժեք ունեցող փալասին վճարում եյին 2 կոպեկ, կ.մ թե չե 2 կոպեկի արժեք ունեցող մի վորեն իր: Այսպես, որինակ, Ռւկրայինայի փալաս հավաքողները մի ամբողջ կույտ մանրունքի համար, վորով կարելի յեր մի ամբողջ հակ կազմել, տալիս եյին մի փոքրիկ մատանի, վորոնց 10-նյակը չարչիները գնում եյին 5-7 կոպեկով, նշանակում եմի ամբողջ դեղ փալասի համար, վոր կես կիլոգրամմից ավելի յե կզում, փոխանակ 10 կոպեկի, մեկ կոպեկից ել պակաս եյին վճարում:

Վերջին ժամանակներու, յերբ պիոներական շարժումն ինչպես քաղաքում, նույնպես և գյուղում աճեց, այլև դժվար եր փալաս հավաքողների համար յիշեխաներին խարել:

Պիոներները հասկացան, վոր այդ չարչիները խարում ու շահագործում են իրենց և սկսեցին համոզել յերեխաներին, այդքան եժան գնով չվաճառել փալասը: Չե վոր նրանք աշխատանքով են ձեռք բերվում: Յեվ շատ անգամ պիոներներին հաջողվում եր փալասի հավաքման գործը յեռապատկել ու նույնիսկ քառապատկել և հասցնել պետական գնին:

Անցյալ տարի առիթ յեղավ խոսելու փալաս հավաքողների հետ և հարկավոր եր լսել թե նրանք ինչպես են գնահատում պիոներներին:

Յեվ ինչ յերեխաներ են այժմ... ինչ փորձառություն ունեն նրանք: Յեվ իրենք չեն ծախում և ուրիշներին չեն թողնում ծախելու: «Եժան մի ծախի, սպասիր, մինչև իսկական զինը տա», իսկ նրանք լսում են նրանց:

Փալաս հավաքողները, ինչպես նաև մինչև այժմ նման արհեստով պարապող մարդիկ գյուղական կուլակներն են, վորոնք ատում են պիոններներին, վորովհետեւ նրանք չեն թույլ տալիս խաբել ու շահագործել յերեխաներին: Իսկ պիոններները շատ խելոք են վարփում, յերբ թույլ չեն տալիս կողոպատել յերեխաներին:

Այժմ արդեն այդ քիչ եւ Պիոններներին հարկավոր և ուրիշ կազմակերպությունների հետ միասին ուտիլի հավաքման գործը խլել կուլակներից և չթողնել ուրիշի գումարներով հարստանալ: Հարկավոր և կազմակերպված կալչել աշխատանքի, հավաքել տնային չոր աղբերը և հանձնել պետական պահեստին: Նա բոլորը կընդունի և կվարձատը իր արժողությամբ, այն արժողությամբ, վոր հաստատված և պետական որդանների կողմից: Առանձնապես գյուղի պիոններներին հարկավոր և մտածել այս ուղղությամբ և այնպես անել, վոր կարելի լինի հավաքել զյուղի ամբողջ ուտիլը: Իհարկե, այս գործով պետք և զբաղվի նաև քաղաքի պիոնները:

Բայց, կրկնում ենք, աշխատանքը պետք և կատարել մտածված ու կազմակերպված: Պնտք և աշխատեն վոչ թե անհատներ, այլ ամբողջ կոլեկտիվը: Պետք և մտածել կազմել աշխատանքի ծրագիրը, և աղա դնել կոլեկտիվի քննությանը:

ԿԱԼԵԿՈՅՆՎ ԿԵՐՊՈՎ, ԻՆՉՊԵՍ ՄՐԶՅԱԽՆՆԵՐ,
ԿԱՐՈՒՑԵՆՔ ՍՈՑԱԼԻԶՄ

Տնային արժեքավոր աղբի հավաքման գործում
հարկավոր ե սիստեմատիկ, ամենուըյա և հոգատար աշ-
խատանք. խկական մրջնային աշխատանք:

Պիռներ, զու տեսել ես, ինչպես մրջյունները կե-
րակուր են քաշ տալիս մրջնաբուն:

Ամեն մի մրջյուն քաշ ե տալիս մի փոքր ցախ,
կամ տերնի կտոր և զբանցից ստացվում ե ահաղին
դեզ. Հենց այսպիս ուափիլի հավաքման գործը: Ամեն
մի պիռներ զուըս ե տանում բնակարանից տարեկան
մեկ կամ յերկու արկղ աղբ, և յեթե բոլոր պիռներ-
ները սիստեմատիկ աշխատեն այս գործում, կհավաք-
վի տասնյակ հազար տոնն աղբ, վոչնչացումից, մի-
լիոնավոր զումարներ կփրկվեն:

Յենթաղրիր, թե մենք տնային չոր աղբի հա-
վաքման գործում մեծ հաջողություններ ենք ձեռք
բերում և չենք թույլ տալիս կորչելու փալասի կտոր-
տանքները, մաշված կրկնակոշիկները, վոսկորի կտոր-
ները և այլն:

Ե՞նչ կստանանք սրանից:

Ամեն տարի մեր տեքստիլ Փարբիկանները վերա-
մշակում են՝ մոտավորապես մեկ միլիոն տոնն թել—
բամբակյա, բրդյա և կտավե, բոլոր այդ գործվածք-
ներն ամեն տարի գնվում են մեր աղքարնակչության
կողմից: Նշանակում ե ամեն տարի մեր աղքարնակ-
չությունն ովտագործում ե և դեն ե ձգում գործվածք-
ներ, վորոնք պարունակում են միլիոն տոնն թելեր.
յեթե նույնիսկ ընդունենք, վոր այդ մեկ միլիոն

տոռնն. գործվածքից մաշվել և փոշի յե դարձել գործածության ժամանակը, կամ այրվել ու ջուրն և նետվել և ընդհանրապես կորել և կեսը, ապա մնացած մյուս կեսը յեթե ամբողջովին հավաքենք, կտտանանք 500 հազար տոռնն փալաս, վոր արժե 50-ից մինչև 60 միլիոն ռուբլի:

Մեր ռեզինի Փարբիկաները տարեկան արտադրում են 25 միլիոն դույշից ավելի կրկնակոշիկ, Բացի սրանից, արտադրում են ոթոմոքիների և հեծանիմսերի շիներ, զանազան խուփեր և այլ ռեզինյատեխնիկական ու տնտեսական իրեր և այլ խաղալիքներ։ Այս բոլորի համար տարեկան ծախսվում է 40 հազար տոռնն ռեզին։ յեթե նույնիսկ այս քանակից դեն ձգենք կեսը (50 տոկոսը), վոր կարող ե վոչնչանալ գործածության ժամանակ, այնուամենայնիվ տարեկան պետք և հավաքվի պահեստում 20 հազար տոռնն ռեզին՝ այսինքն 2 միլիոն ռուբլու գումարի։

Խոհանոցներից ստացված վոսկորները, — ամբողջ ԽՍՀՄ մենք կարող ենք հավաքել տարեկան 325 հազար տոռնն, կամ 11 միլիոն ռուբլի։

Այսպիսով, միայն, թված տնային անպետք իրերի խմբավորումից, կարող ենք հավաքել ուտիլ 75-80 միլիոն ռուբլու։ Այնինչ մենք հավաքում ենք 35 միլիոն ռուբլու։ 40, 45 նույնիսկ 50 միլիոն ռուբլի դուրս տեղը կորչում են։

Հարկավոր ե նրանց փրկել կորստից։ Պիոներ, դու և քո կազմակերպությունն ավելի մեծ ոգնություն կարող եք ցույց տալ պետությանը, քան ուրիշը. և դու պետք ե ցույց տաս այդ ոգնությունը, խիստ հսկել վորապեսդի չոր արժեքավոր աղբը չկորչի

անոգուա, այլ արվին ուտիլ կազմակերպություններին։ Դու պետք եւ այդ գործին հսկես վոչ միայն ձեր տանն ու բնակարանում, այլ և զանազան հիմնարկներում, ֆարբիկաներում, դործարաններում, արհեստանոցներում, խանութներում և այլն։

Հիմնարկներում, ֆակրիկաներում և արհեստանոցներում շատ բան կա սպառզործելու:

Հիմնարկություններում հավաքվում են մեծ քառակությամբ թղթի կտորներ, խանութներում՝ մեխիսեր, պարաններ, խսիրներ, պարկեր, յերկաթե և պղնձելարեր և այլն. ճաշարաններում՝ վոսկորներ. կաբի արհեստանոցներում, արտելներում և ֆարբիկաներում՝ փալասներ, թելերի կտորներ և այլն. կաշե-գործարաններում, արհեստանոցներում, արտելներում՝ կաշվի կը-տորներ, ծուծ մեխիսեր և այլն։ Հարկավոր և միայն աշալուրջ հետեւող և տնտեսող աչք ու ուշադիր վերաբերմունք գեղի վերոհիշյալները, վորոնք հանդիսանում են պետության սեփականությունը, կնշանակի, պիիներ, նաև քո սեփականությունը։

Խնամատար վերաբերմունք դեպի տնային այդ չոր և արժեքավոր աղբը ցույց տալը մեծամեծ ողուտ և մեր Խորհրդային Միությանը, հնարավորություն տալով մեր պետությանը զանձել այն գումարները, վորոնք պետք եւ զնային արտասահմանից հումութերելու համար, իսկ այդ մեծ նշանակություն ունի կոլեկտիվացման յենթարկվող գյուղատնտեսության և արդյունաբերության համար։

Աղք հավաքելը ոգուտ և բերում նաև այն տանը, վորտեղից վերացվում եւ այդ աղբը Բնակարանային վարչությունը, ինչպես մենք արդին ասել

ենք, կստանա ուստիլ կազմակերպություններից այդ աղբի համար գումար, վոր կարող ե ոգտագործել տան նորոգման, տան համար ոգտակար հիմնարկություններ հիմնելու. ընդհանուր լվացքատուն, մանկական անկյուն կամ մանկական հրապարակ և այլ հիմնարկներ հիմնելու համար:

Պիոներ, այդ գործը կարող ե ոգտակար լինել նաև քո կազմակերպությանը! Փոխարինելով այն մարդուն, վոր պարբերաբար աղբը գուրս ե տանում, պիոներները կարող են ստանալ 30-50 ռուբլի մնակ տնից, իսկ ամբողջ Մոսկվայից շ միլիոն ռուբլի, ուստիլպետառի աշխատակիցների հաշվի համաձայն:

Ինչքան կարող են նրանք ստանալ, յեթե ուստիլի հավաքման գործը տարվի համամիութենական մասշտաբով, հիմա ասել չափազանց դժվար ե, այդ կախված ե նրանից, թե ինչպիսի յեռանդով կկպչեն գործին:

Տնային չոր աղբի հավաքման գործում, նորից ենք կրկնում, պետք ե կազմակերպված աշխատել. ինչպես քաղաքում, նույնպես և դյուզում պետք ե միացնել առանձին ջանքերը, վեր ածվել մի ընդհանուր կոլեկտիվի բարեկամական աշխատանքի:

Պիոներ, յեղիր պատրաստ:

ՈՒՅԻԼԻ ՀԱՎԱՐՄԱՆ ՎՈՒՇԱՏԵՏՐ ՊԻՌՆԵՐԻ ՀԱՄԱՐ

I. Դու պետք ե աշխատես, վորպեսդի չոր և անային արժեքավոր աղբը —ուտիլ-հումույթը հավաքվի խոհանոցի հատուկ արկղում կամ կողովում, կամ պարկում:

II. Դու պետք ե կանոնավոր կերպով, ամեն որ դուքս տանես այդ աղբը բնակարանից դեպի բակը, գրանց հատկացրված շենքը:

III. Դու պետք ե դարսես դրանց հատուկ կույտերով ըստ տեսակի. փալասներ, վոսկորներ, մետաղներ, թղթեր, սրվակներ, ոեղին և այլն:

IV. Դու պետք ե հետեւս, վոր այդ շենքը փակ լինի:

V. Դու պետք ե հետեւս, վոր փալաս հավաքողները չգան ու չզողանան քո հավաքած ուտիլ-հումույթը.

VI. Դու պետք ե հետեւս, վոր քո հավաքած ուտիլ-հումույթը չմնա անձրեսի տակ ու չթրջվի:

VII. Դու պետք ե ժամանակին հայտնես բնակարանային վարչությանը, վոր ուտիլը հավաքվել ե բավական չափով, վորպեսդի նա հայտնի ուտիլ տանողներին:

VIII. Դու պետք ե ուտիլը հանձնես չփչացած, չնեխված, առանց ավելորդ աղբի (քարի կտորաւանքներ և այլն):

IX. Դու պետք ե գիտենաս, վոր ուտիլի պահանառում ընդունվում են հետեւյալ ուտիլ-հումուլթ-ները.

1. Ամեն գույնի բամբակե փալասներ:
2. Կտավի փալասներ և կտորաանքներ:
3. Բոեզենտանման կտոր և բամբակի գործվածք:
4. Բրդյա, մահուղյա փալասներ և կտորներ:
5. Ամեն տեսակի փալաս-փուլուսներ:
6. Զիթահան գործարաններում գործածվող սըրբիչներ:
7. Վոչխարի և ուղարի բրդից գործած թաղիքներ և յափնջիներ:
8. Թաղիք և թաղիքի վոտնամմաններ:
9. Վոչխարի մոբթուց պատրաստված քրքի փալասներ:
10. Մաղե պարաններ կամ թոկեր, հին ցանցեր, անպետք ու հին ձեռնոցներ:
11. Քաթանի մասպորդներ և կտորներ:
12. Կտավային արմատաթիկերի խծուճներ:
13. Խորի չփթած և չսեացած ծվեններ:
14. Զանազան ուղինե իրեր:
15. Դաշտերից, ձորերից հավաքած և կերակրից մասցած վոսկորների կտորներ:
16. Յեղների, կովերի յեղջյուրներ (պետք ենկատի ունենալ վոր այդ յեղջյուրները ճեղքվածքներ չունենան և կոտրտված չլինեն):
17. Գառների և այծերի յեղջյուրներ:
18. Ինչպես վոսկորներից բաժանված, նույնպես և չբաժանված սմբակներ:

19. Յեղջյուրային այլ նյութեր՝
 20. Հին թղթեր—մակուլատուրա և պատուված,
 կեղտուված, բայց վոչ յուղուված։
21. Հին մետաղյա ամաններ (բացի եմալով ծած-
 կվածներից). բոլոր տեսակի սև և գունավոր մետա-
 ղի կոտրվածքներ (յերկաթ, թուղ, պղինձ, արճին,
 կլայնեկ, ցինկ և այլն)։
22. Հին, արդեն ոգտագործված սրվակներ և
 շաղրակներ։
23. Հին, բայց չայրված խցաններ։
24. Բոլոր տեսակի ապակե մանրունքներ։



Բ ՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կառուցիչնք սոցիալիզմ	3
Պիտներ, մաքրու քո բաժինը սոցիալիզմի կառուց- ման գործում	6
Կորչում և ուտիլիզ, գանդաղում և սոցիալիզմի կա- ռուցման գործը	11
Բոլոր պետքանակները պետությանը.	14
Պիտներ կազմակերպված կերպով, ուտիլիզ հանձնիր պետությանը	18
Կուլակի վզակոթին, Մենք ինքներս հավաքենք ուտիլիզ	22
Կոլեկտիվ կերպով, ինչպես մըջյուններ, կառու- ցենք սոցիալիզմ:	25
Ուտիլիզ հավաքման հուշատերը պիտների համար	29

Խ. Ա. Հ. ՀԱՅԱՍՏԱՆ

- | | |
|-----------------|----------------|
| 1. Յերեգան | 7. Նոր-Բայազետ |
| 2. Լենինական | 8. Ստեփանավան |
| 3. Դարաքիլիսա | 9. Ղամարլու |
| 4. Դիլիջան | 10. Եջմիածին |
| 5. Դըղլ-Դոչ | 11. Ն. Ախուա |
| 6. Մոլու-Դյուկա | 12. Յելենովկա |

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0034169

~~104.~~ — 10

1

2

A i 1322

Ամեն մի պիոներ՝ պարտավոր և ոգնել պետությունը սոցիալիստական շինարարության գործում:

Մեկ օրինակ

Ուտիլ հավաքներ, իրագործի այդ ողնությունը:

Ուտիլ համույթի վերաբերյալ գրականությաւն պատվերներ ուղարկել հեռեյալ հասցեյով:

Թիֆլիս Կոմինտերնի փող. № 6 „ԶԱԿՈՒՑԻԼ“ տելեֆ. 22—67